

**ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

**ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Խոցելիության և կարողությունների գնահատումը (ԽԿԳ) տեղական մակարդակում ռիսկի կառավարման (ՏՄԴԿ) բաղկացուցիչ մաս է և իրականացվում է համայնքի հետ համատեղ՝ նպաստելով աղետների ռիսկի հավաստագրման գործընթացին: ԽԿԳ-ն՝

- " **բացահայտում է** համայնքին սպառնացող, այդ թվում՝ կլիմայի փոփոխության հետ կապված, վտանգները, համայնքի խոցելիությունը, առկա կարողություններն ու վերջիններիս համադրությունից բխող աղետների ռիսկը,
- " **ձևավորում է** համայնքի համար առաջնային, կենսական նշանակություն ունեցող, աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների պլանավորման սկզբունքներն ու մեխանիզմները,
- " **նպաստում է** համայնքի բնակչության իմացության, հմտությունների, գիտելիքների մակարդակին համայնքում առկա ռեսուրսների բացահայտմանը, որոնք հնարավոր է ուղղել աղետների ռիսկի նվազեցմանը (ԱՌՆ) նպաստող համայնքահեն միջոցառումների պլանավորմանն ու իրականացմանը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ**

**Մեթոդի ընտրության հիմնավորումը**

Հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանի համայնքների վերաբերյալ կան պետական վիճակագրական, մասնագիտական, սոցիոլոգիական տվյալներ, ինչպես նաև կլիմայական ուսումնասիրություններ և հետազոտություններ, նպատակահարմար է ԽԿԳ տվյալների հավաքագրման համար հայտնի 14 գործիքներից/մեթոդներից կիրառել միայն հետևյալները.

- " Երկրորդային աղբյուրներից տվյալների հավաքագրում,
- " ակնադիտական զննում,
- " քարտեզագրում,
- " կիսակառուցվածքային հարցազրույցներ,
- " քննարկումներ ֆոկուս խմբերում,
- " սեզոնային օրացույց/աղյուսակ,
- " պատմական օրացույց/աղյուսակ,
- " հիմնական դերակատարների ցանցային աղյուսակ (կառավարական և ոչ կառավարական շահագրգիռ կառույցների ցանց):

Ընտրվել են այն առանցքային գործիքները, որոնց համատեղ կիրառությունը բավարար է ԽԿԳ տվյալ գործընթացի՝ համայնքին սպառնացող հնարավոր վտանգի (ռիսկի) վերհանման համար: Ի լրումն, որոշ գործիքներ համատեղվել են նաև ԽԿԳ, այսպես կոչված, «մտքերի տարափ» կամ «ուղեղային գրոհ» մեթոդի հետ, հատկապես, հարցման ենթակա փոքրաքանակ խմբերում (օրինակ՝ ֆոկուս խումբ), որը հնարավորություն է ընձեռում կարճ ժամանակահատվածում հավաքագրել տվյալներ և փոխանակել նոր, հետաքրքիր գաղափարներ խնդրո առարկայի վերաբերյալ:

**ԽԿԳ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ**

**ԽԿԳ-ն** իրականացվում է եռափուլ՝ երաշխավորելով նախապատրաստական, տվյալների հավաքագրման և վերլուծական աշխատանքների իրագործումը, որոնք ուղղված են համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների պլանավորմանն ու իրականացմանը:

ԽԿԳ-ն համայնքային մասնակցային հետազոտական, վերլուծական գործընթաց է, որի տևողությունը 7-10 օր է, և որը բաղկացած է հետևյալ փուլերից.

- " Նախապատրաստում.
- " Տվյալների հավաքագրում.
- " Վերլուծություն:

Ներկայացնել ԽԿԳ հիմնախնդիրը՝ ելնելով համայնքային/մարզային մակարդակում համագործակցության սկզբունքից և ապահովելով գնահատման ողջ գործընթացի կենսունակությունը կազմակերպչական և այլ առումներով:

### **Ձեռնարկվող քայլերը**

Ստեղծել մարզային ԱՌՆ թիմ, ներգրավելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ) տարածքային ստորաբաժանումների, տարածքային կառավարման մարմինների, ինչպես նաև խնդրին առնչվող մարզային այլ վարչությունների, հիդրոոդերևութաբանական ծառայության և ԱՌՆ ոլորտումներ գրավված հասարակական կազմակերպությունների (ՀԿ) ներկայացուցիչներին:

### **Բ. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ ԵՎ ՀԵՏԱՉՈՏՈՒՄ**

#### **Նպատակը**

Վերհանել համայնքին սպառնացող վտանգներն ու ձևավորել վերջիններիս դասակարգումն ըստ գերակայության՝ ապահովելով համայնքի շահագրգիռ մասնակցությունը:

### **Ձեռնարկվող քայլերը**

Համայնքի ղեկավարության հետ հաստատել ԽԿԳ իրականացման վերջնական օրակարգը՝

- " Համայնքի ԽԿԳ տեղական համակարգողի հետ միասին անցկացնել համայնքի ակնադիտական զննում, վտանգների, խոցելիության և կարողությունների քարտեզագրում:
- " Հրավիրել առաջին հավաքը համայնքի բնակիչների հետ, նպատակ ունենալով՝
  - " ներկայացնել ԽԿԳ գործընթացը,
  - " քննարկել և լրամշակել ակնադիտական զննման և քարտեզագրման արդյունքները,
  - " քննարկել և լրացնել սեզոնային և պատմական օրացույցները,
  - " քննարկել կառավարական և ոչ-կառավարական շահագրգիռ կառույցների ուղղակի կամ անուղղակի մասնակցությունը համայնքի սոցիալ-տնտեսական կյանքում և ձևավորել նրանց ցանկը՝ ըստ համայնքի զարգացմանը նպաստող նրանց կարևորության և ազդեցության աստիճանի:
- " Ձեռնարկել զանգվածային հարցում բնակչության շրջանում հարցաթերթիկների միջոցով:
- " Կազմակերպել քննարկումներ ֆոկլուս խմբերում:
- " Հրավիրել 2-րդ հանդիպումը համայնքի բնակիչների հետ, նպատակ ունենալով՝
  - " համատեղ քննարկել հավաքագրված տվյալները,
  - " ձևավորել համայնքի խոցելիության ու կարողությունների վերաբերյալ տեսակետ աղյուսակների միջոցով՝ գերակայող վտանգների հաջորդականությամբ:

### **Գ. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

#### **Նպատակը**

Համայնքի հետ համատեղ մշակել ԱՌՆ նպատակաուղղված, ավարտուն և փոխհամաձայնեցված գործողությունների համակարգ, որը համահունչ կլինի ինչպես համայնքի պահանջներին, այնպես էլ ԽԿԳ իրականացրած խմբի մասնագիտական մոտեցումներին:

### **Ձեռնարկվող քայլերը**

ԽԿԳ իրականացնող խումբը՝

- " ամփոփում, վերլուծում, մշակում և համակարգում է հավաքված տվյալները (տրիանգուլյացիայի մեթոդով) և, ըստ բացահայտված վտանգների առաջնահերթության, առաջարկում է ԱՌՆ ուղղորդված անհրաժեշտ գործողությունների պլան,
- " վերադառնում է համայնք՝ քննարկելու վերլուծության արդյունքները, և, ըստ բացահայտված վտանգների առաջնահերթության, աջակցելու համայնքին ձևավորել ոփսկերի նվազեցմանը նպաստող իր տեսակետը՝ համայնքի կարողությունների հզորացմանը կամ խոցելիության նվազեցմանն ուղղված ձեռնարկումների միջոցով:

### **Ակնկալվող արդյունքները**

- " Բարձրացել է համայնքի իրազեկվածությունը իրական և առաջնային ռիսկերի վերաբերյալ:
- " Համայնքը ԽԿԳ իրականացրած խմբի հետ եկել է փոխհամաձայնության համայնքին սպառնացող վտանգների վերաբերյալ:
- " Համայնքը պատրաստակամ է կատարել իր ներդրումը ռիսկերի նվազեցմանը նպաստող միջոցառումներում:

- " Համայնքը կազմել է ԱՌՆ նպաստող նախագծերի իրականացմանը հնարավոր աջակցող շահագրգիռ կազմակերպությունների կամ հիմնական դերակատարների ու մասնավոր ներդրողների ցանկը:
- " Համայնքը պատրաստակամ է ԱՌՆ նպաստող նախագծերը ընդգրկել համայնքի զարգացման ծրագրի մեջ:
- " ԽԿԳ իրականացրած խումբը մարզային ԱՌՆ համակարգող աշխատանքային խմբին և համայնքին տրամադրել է ԽԿԳ համալիր զեկույց, ներառյալ արդյունքների ամփոփագիրը և առաջարկությունները:

## **Դ. ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

### **1. ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ**

#### **Նպատակը**

Երկրորդային աղբյուրներից հավաքված տվյալները անհրաժեշտ են ԽԿԳ գործընթացը ձեռնարկած խմբի համար, քանի որ տրամադրում են նախնական տեղեկատվություն համայնքի մասին: Համայնքի մասին երկրորդային աղբյուրներից տվյալները հավաքվում և համակարգվում են նախորդ՝ ԽԿԳ նախապատրաստական փուլի ընթացքում:

Մասնավորապես, դրանք կարող են լինել պետական կառույցների կողմից հրապարակված պաշտոնական տվյալներ, քարտեզներ, համայնքում իրականացված ծրագրերի վերաբերյալ այլ կազմակերպությունների հաշվետվություններ, սոցիալական ինստիտուտների հետազոտություններ, մարդահամարի տվյալներ, տեղական ինքնակառավարման մարմինների հաշվետվություններ, ՋԼՄ-երում հրապարակված նյութեր և այլն:

#### **Ակնկալվող արդյունքները**

ԽԿԳ գործընթացի վերլուծական փուլում համայնքին սպառնացող վտանգների, խոցելիության, ռիսկերի, ռեսուրսների վերաբերյալ երկրորդային աղբյուրներից քաղված տվյալները կարևորվում են հետագա համադրման և վերլուծության համար (տե՛ս տրիանգուլյացիա):

Ոչ պակաս կարևոր է նախնական տեղեկատվություն ունենալ համայնքի զարգացման ծրագրերի վերաբերյալ, ինչն իր հերթին, ազդեցություն կունենա ԱՌՆ միջոցառումների հետագա պլանավորման վրա:

Չնայած նրան, որ միշտ չէ, որ հնարավոր է ունենալ երկրորդային աղբյուրների տվյալների լայն ընտրություն, այնուամենայնիվ, անգամ սակավ տեղեկատվությունը անհրաժեշտ է դիտարկել:

Օրինակ, համայնքի կլիմայական բնութագրի, ինչպես նաև դիտվող վտանգավոր հիդրոգեոլոգիաբանական երևույթների մասին տեղեկատվություն կարելի է ստանալ պետական հիդրոգեոլոգիաբանական ազգային ծառայությունից կամ մոտակա հիդրոգեոլոգիաբանական կայանից:

### **2. ԱԿՆԱԴԻՏԱԿԱՆ ԶՆՆՈՒՄ**

#### **Նպատակը**

Ակնադիտական զննումները իրականացվում են ԽԿԳ խմբի անդամների կողմից համայնք մտնելու առաջին իսկ պահից, նպատակ ունենալով գրանցելու այն ամենը, ինչը վաղուց, գուցե, սովորական է դարձել համայնքի բնակիչների համար, բայց, որոշակի առումով, վտանգ կամ ռիսկ է պարունակում և անմիջապես գրավում է նորեկի ուշադրությունը:

Անմիջական/առաջնային տպավորությունը համայնքից, այնտեղ տեղակայված շենք/շինություններից, մարդկային ռեսուրսներից, տեղանքից, հողօգտագործումից հանդիսանում է արդյունավետ միջոց հետագա վերլուծության համար: Հաճախ համայնքի բնակիչը կարող է ուշադրություն չդարձնել առկա վտանգավոր առարկաների կամ երևույթների վրա, քանի որ դրանք իրեն շրջապատող ամենօրյա առարկաներն ու երևույթներն են:

#### **Ակնկալվող արդյունքները**

Ակնադիտական զննումները կատարելիս ԽԿԳ խումբը տիրապետում է այնպիսի տեղեկատվության, որը չկա և ոչ մի պաշտոնական կամ երկրորդային տեղեկատվական աղբյուրներում. առարկաներ, մարդիկ, երևույթներ, հարաբերություններ և այլն: Հավաքված տվյալները բավական կարևոր են

հետագա վերլուծության համար, մասնավորապես, համայնքի համար՝ համայնքի մասնակցությամբ աղետների ռիսկի նվազեցմանը նպաստող ծրագրերի ձևավորման ընթացքում:

Հավաքված տվյալները, սովորաբար, բազմաբնույթ են և, պարզապես, տեղեկատվություն են պարունակում համայնքի ֆիզիկական տվյալների և կենսագործունեության վերաբերյալ:

Օրինակ կարող է ծառայել համայնքի բնակիչների տրամադրությունը և հարաբերությունները միմյանց հետ, գյուղում աղբահանության կարգավորման, ջրային ռեսուրսների կառավարման հարցերը, համայնքի հիմնական եկամտի աղբյուրները, կամ առկա ռիսկի գործոնները, որը կստիպի մարդկանց համախմբվել դրանք նվազեցնելու նպատակով:

## **Օրինակ**

**ԱԿՆԱԴԻՏԱԿԱՆ ՁՆՆՈՒՄՆԵՐ**

Համայնք մտնելու առաջին իսկ պահից ԱՌՆ թիմի անդամները՝(մարզային փրկարարական ծառայության և աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմի ներկայացուցիչներ) և համայնքի պատասխանատու անձինք միասնաբար անցկացրել են ակնադիտական զննում,որի ընթացքում գրանցվել են ԱՌՆ գործընթացի համար անհրաժեշտ առաջնային տպավորությունները համայնքի շինություններից,ճանապարհներից,աղբահանությունից և այլն:

Առարկաներ, երևույթներ, մարդիկ, հարաբերություններ	Նկարագիր
--	----------

**Ենթակառուցվածք**

Հիմնական շինություններ	Համայնքի բնակելի ֆոնդը հիմնականում կազմված է 5 և 9 հարկանի շենքերից և առանձնատներից:Բնակելի տները մեծամասամբ գտնվում են բարվոք վիճակում:Տնամերձ տարածքները զբաղեցնում են այգիներ և բանջարանոցներ;
------------------------	---

Ճանապարհներ՝ հիմնական, ներքին	ճանապարհները համայնքում հիմնականում կառուցված են, ասֆալտապատման աշխատանքները ընթացքի մեջ են,առավելագույն թույլատրելի արագությունը նախատեսված է 60-80կմ/ժ,նվազագույն արագությունը 40կմ/ժ,բոլոր ճանապարհները լուսավորված են գիշերային լուսատուներով:ճանապարհները սպասարկվում են Վայք ճՇԾ-ի և Ջերմուկի կոմունալ բարեկարգում և սպասարկում ՀՈԱԿ-ի կողմից:
-------------------------------	--

Կոյուղի	Համայնքը կոյուղացված է:հսմելու ջրի,ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը պատկանում են<<ՎԻՈԼԱ ՋՈՒՐ>>ՓԲ ընկերությանը: Ջերմուկ քաղաքը այդ համակարգերը վարկային ծրագրի շրջանակներում հիմնովին վերակառուցվել են 2014-2015թթ.-րի ընթացքում,մինչդեռ ոլորտը խնդիրներ ունի գյուղական բնակավայրերում,որը ընթացիք աշխատանքների արդյունքում կապահովի ոռոգման և խմելու ջրով,կկազմակերպվի նորմալ ջրահեռացում: Ջերմուկ համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերից միայն Ջերմուկ քաղաքն ունի կեղտաջրերի մաքրման կայան,որը ևս պատկանում է նշված ՓԲ ընկերությանը,որը ծառայում է քաղաքի բնակչությանը:
---------	--

Աղբահանություն	Աղբահանությունը Ջերմուկ քաղաքում,Կեչուտ և Գնդևագ գյուղերում կատարվում կենտրոնացված ձևով<<ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ և ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>>ՀՈԱԿ-ի միջոցով,աղբը տեղափոխվում է <<Չիրակ>> աղբավայր: ՀՈԱԿ-ը իր գործառույթները իրականացնում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան համայնքի ավագանու կողմից հաստատված կարգի և սխեմայի համաձայն՝ամեն օր: Համայնքում առկա է 2 միավոր աղբահանության համար հատկացված մեքենա:
----------------	---

**Կենսական կարևոր համակարգեր**

Դպրոց ,ուսումնական այլ հաստատություն	Ջերմուկ համայնքում իրականացվում է հիմնական կրթություն,որը հանդիսանում է պարտադիր կրթության երկրորդ մակարդակը և ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի երկու աստիճանները: Համայնքում կան 4 Դպրոցներ՝ Ջերմուկի ավագ դպրոցը՝ Դպրոցի շենքը տիպային է,կառուցվել է 1971թ.-ին,դպրոցի մակերեսը 4454,15 քառ. մետր է, դպրոցը ունի 2 մասնաշենք: Ջերմուկի Մ.Գորկու անվան 1-ին հիմնական դպրոց, դպրոցը կառուցվել է 1960թ.-ին,ընդհանուր մակերեսը՝2212,2 քառ.մ է,ունի 2 մասնաշենք: Ջերմուկի թիվ 3 միջն. Դպրոցը, շենքը տիպային է,ընդհանուր մակերեսը՝2500 քառ. մ է,դպրոցը քարաշեն է,դպրոցն ունի 1 մասնաշենք:
--------------------------------------	---

	Գնդեվագի դպրոցը, որը նույն պես քարից է, վերանորոգված:
Բուժարան , հիվանդանոց	Համայնքում գործում է առողջության կենտրոն, այն ապահոված է առաջին բուժօգնության պարագաներով և դեղորայքներով: Մասնաշենքի վիճակը լավ է, այն վերանորոգվել է վերջին տարիներին: Շուտով Ձերմուկի առողջության կենտրոնում պայմանագրի հիման վրա տարբեր մասնագիտության բժիշկներ կաշխատեն բնակչության առողջությունը էլ ավելի ապահով դարձնելու համար:
Գյուղապետարան	Կեչուտի վարչական շենքը կառուցվել է 1979թ.-ին , բայց վերանորոգված է, հասանելի վայրում է և բնակիչների կողմից դժվարություններ չեն առաջանում գյուղապետարան հասնելու համար: Իսկ Գնդեվագի վարչական շենքը կառուցվել է 1963թ.-ին վերանորոգված է, բնակիչների համար հասանելի վայրում է գտնվում:
Տրանսպորտ, էներգակիր, ջրային ռեզերվուար, հաղորդակցության և կապի համակարգ կամ միջոց, ոստի - նություն, հրշեջ խումբ, այլ	Համայնքը սպասարկում է ՀՀ ԱԻՆ Փրկարար ծառայության Վայոց Ձորի մարզային վարչության Ձերմուկի ՀՓՁ ստորաբաժանման կողմից: Մոտակա ստորաբաժանումը տեղակայված է Ձերմուկ քաղաքում: Փրկարար ծառայությունը իր աշխատանքը կատարում է բարեխղճորեն և միշտ պատրաստակամ է աջակցելու համայնքին տարբեր իրավիճակներում: Համայնքը սպասարկում է ՀՀ Ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Ձերմուկի բաժնի կողմից, Ձերմուկ համայնքի բաժինը գտնվում է Ձերմուկ քաղաքում, ծառայությունը իրականացվում է շուրջօրյա: Ոստիկանությունը միշտ պատրաստակամ է աջակցելու մարդկանց՝ իրավախախտներից և հանցագործներից պաշտպանելու համար: Համայնքում առկա է բջջային, ֆիքսված հեռախոսակապ, ինտեռնետ և փոստային ծառայություններ, որոնք ապահովվում են կապի իդեալական վիճակը
Ռիսկային տարածքներ – հանգստի, ժամանցի, հանրային հավաքի վայրեր	
Սրճարան, սննդի վայր	Համայնքում կան բացօթյա սրճարաններ , ինչպես նաև սննդի օբյեկտներ և ռեստորաններ, որոնք հասանելի են թե տեղի բնակչությանը, և թե զբոսաշրջիկներին:
Խաղահրապարակ, մարզադաշտ	Համայնքում կան խաղահրապարակներ, մարզադաշտ, սպորտ դպրոց, շախմատի տուն որոնք կարելի է երեխաների զբաղմունքն ապահովվելու համար, դրանք նաև հարմարեցված են հաշմանդամություն ունեցող երեխաների համար:
Վառելիքի, գազի լցակայան	Համայնքի տարածքում առկա է 1 բենզալցակայան, որը գտնվում է սուրբ Գայանե եկեղեցու հարևանությամբ, ինչպես նաև գազալցակայան, որը գտնվում է Կեչուտ գյուղի վարչական տարածքում:
Ջրափոսեր, չիստող ջուր	Համայնքի տարածքում ջրափոսեր չկան
Եկեղեցի (այլ պատմամշակութային շինություններ, կամուրջներ )	Պատմամշակութային կոթողներ Համայնքը հարուստ է պատմամշակութային կոթողներով: Համայնքում կան մատուռներ, եկեղեցի, որը ամեն շաբաթ կատարում է եկեղեցական արարողություններ: Համայնքում է գտնվում սուրբ Գայանե եկեղեցին , որը կառուցվել

Է 2007 թվականին, Գնդեվանքի կոթողը, որը կառուցվել է 936 թվականին, սուրբ Աստվածածինը, կառուցման տարեթիվը 936 թվականին:

Առարկաներ, երևույթներ, մարդիկ, հարաբերություններ		Բնակչությունը հիմնականում տեղաբնակներ են
Սոցիալ-տնտեսական		
Տուն	Ձերմուկ քաղաքում հիմնականում բազմաբնակարան շենքեր են, իսկ գյուղական բնակավայրերում կան և բազմաբնակարան շենքեր և կան առանձնատներ:	
Տների մերձակա շրջակայքը	ամենօրյա աշխատանքի շնորհիվ շենք շինությունների տարածքները մաքուր են:	
Ընտանիքի կառուցվածքը / կենսական պայմանները	Մեծ ընտանիք (բազմասերունդ՝ պապ, տատ, երեխաներ), խնամված/անխնամ երեխաներ, հաշմանդամ ունեցող, միայնակ մայրեր, կանայք և տարեցներ, այլ	
Բակում առկա շինություններ	Համայնքում հիմնական շինություններն են՝ դպրոցները, հիվանդանոցը, համայնքապետարանի շենքը, բանկերը, ոստիկանության բաժինը, հանքային ջրի գործարանը, հայ փոստը և այլ շինություններ:	
Կենսապրելաձևը		
Առօրեական	Հիմնական աշխատանք/գբաղվածություն, պարապուրդ/ գործազրկություն, այլ	
Սնունդ	Սննդակարգում հացամթերք/կաթնամթերք/մսեղեն այլ, կամ բացակայում են/պակաս են առօրյա սննդակարգից	
Գյուղի բնակիչների հարաբերությունները/վարվելաձևը/վերաբերմունքը միմյանց նկատմամբ , այլ	Բնակիչները միմյանց նկատմամբ քաղաքավարի են, քանի որ հիմնականում տեղաբնակներ են:	
Կարողությունները	Ավտոմեքենա/այլ տեղաշարժման միջոցներ, ընտանի կենդանիներ/կաթնատու/մսատու, շուկա արտահանելու ապրանքներ/գյուղմթերք, այլ եկամուտներ	
Խոցելիությունը	Ցածր/անփոփոխ եկամուտ/սոցիալակն նպաստ, մասնակի/բացակայող ջեռուցման համակարգ, այլ	
Հմտությունները		
Տուն / ապրելու պայմանները	Տունը՝ միահարկ/բազմասենյակ/այլ, կահավորված՝ լավ/վատ/մասնակի/հին իրերով/այլ, տան ներքին հարդարանքը հին/վերանորոգված/ հակասանիտարական, այլ	
Ոչ ֆորմալ համայնքային լիդերներ / հեղինակություններ / հարգված անձնավորություններ	Առկա են/բացակայում են, ձեռնարկող են/աջակցող, այլ	

### 3. ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ

## **Նպատակը**

Քարտեզագրումը ԽԿԳ տվյալների հավաքագրման փուլի այն գործիքներից է, որով ձևավորվում են աղետավտանգ ու ռիսկային տեղանքների ու վայրերի, ինչպես նաև համայնքի հզորությունների, ռեսուրսների ու խոցելիության 3 հիմնական քարտեզները:

Քարտեզագրումը ԱՌՆ գործառույթում հիմնականում ակնկալում է համայնքի համար ակնառու դարձնել ռիսկային տեղանքները, որոնք առօրյա կյանքում կամ տեսանելի չեն, կամ էլ անուշադրության են մատնված:

## **Ակնկալվող արդյունքները**

Քարտեզագրումը իրականացվում է ԽԿԳ խմբի անդամների և տեղական համակարգողի մասնակցությամբ: Քարտեզագրումը թեև ժամանակատար է, այնուամենայնիվ այն շոշափելի և դյուրին կիրառվող գործիք է, և համայնքի համար ստեղծում է իր կարողությունների, հզորությունների և վտանգների ու ռիսկերի համադրման համար ակնառու հնարավորություն:

Քարտեզագրման արդյունքները քննարկվում և լրամշակվում են համայնքի հետ համատեղ՝ վերջինիս հետ առաջին հանդիպման ժամանակ (ԽԿԳ 2-րդ փուլ՝ տվյալների հավաքագրում և հետազոտում):

## **4. ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՖՈԿՈՒՍ ԽՄԲԵՐՈՒՄ**

### **Նպատակը**

Ֆոկուս խմբերը ձևավորվում են համայնքի այն անհատներից, որոնք պատկանում են որոշակի մասնագիտական, տարիքային, սեռային կամ սոցիալական խմբերի (վարչական աշխատողներ, բուժանձնակազմ, ուսուցիչներ, ֆերմերներ, կանայք և այլն):

Ֆոկուս խմբերը ձևավորվում են ԽԿԳ նախապատրաստական փուլում ԽԿԳ գործընթացին աջակցող տեղական համակարգողի և համայնքի ղեկավարի անմիջական օգնությամբ:

Ֆոկուս խմբերում քննարկումները նպատակ ունեն վեր հանելու մասնակիցների իրազեկվածությունը, տեսակետը համայնքի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ: Այս խմբերում քննարկումները, որպես օրենք, նպաստում են առանձնահատուկ տեղեկությունների հավաքագրմանը՝ պայմանավորված այս կամ այն խմբին պատկանելությամբ և կոնկրետ խմբի մասնավոր շահերով: Քննարկումների ընթացքում նաև բացահայտվում է իրական ռիսկերի նկատմամբ այդ խմբերի խոցելիության աստիճանը:

## **Ակնկալվող արդյունքները**

Աշխատանքը ֆոկուս խմբերի հետ ԽԿԳ գործընթացում շատ կարևորվում է, քանի որ արդյունքում ձևավորվում են համայնքի զարգացման որոշակի ոլորտների (գյուղատնտեսություն, շրջակա միջավայր, ջրամատակարարում և սանիտարիա, բնակարանաշինություն, այլ) խոցելիության պատկերը և ռիսկերը, ինչպես նաև համատեղ քննարկվում են համայնքի համար կենսական նշանակության խնդիրների լուծմանն ուղղված հնարավոր ձեռնարկումներ:

## **5. ՍԵՂՈՆԱՅԻՆ ՕՐԱՑՈՒՅՑ**

### **Նպատակը**

Սեզոնային օրացույցը աղյուսակային մեթոդ է և հնարավորություն է տալիս նկարագրել համայնքում մեկ տարվա ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները:

Սեզոնային օրացույցը ցույց է տալիս տարվա ընթացքում տեղի ունեցած աղետները, դրանց ազդեցությունը, ներառյալ կլիմայական փոփոխության հետ կապված ազդեցությունը, սոցիալ-տնտեսական ոլորտում տեղի ունեցած փոփոխությունները, հիվանդությունների բռնկման ժամանակահատվածը և այլն:

## **Ակնկալվող արդյունքները**

Սեզոնային օրացույցը անհրաժեշտ է լրացնել համայնքի հետ միասին: Այն հնարավորություն է տալիս տեսնելու վտանգները և գնահատելու ռիսկերի հաճախականությունը համայնքի բնակիչների տեսանկյունից:



Հետագա վերլուծության համար սեզոնային օրացույցի տվյալները բավական արժեքավոր են, քանի որ համադրվելու են պաշտոնական վիճակագրության, ինչպես նաև ռիսկերի գնահատման համար անհրաժեշտ բոլոր այն տվյալների հետ, որ կհավաքի ԽԿԳ թիմը համայնքի հետ համատեղ աշխատանքի ընթացքում:

### **Սեզոնային օրացույցի լրացման ձևը**

Սեզոնային օրացույցը աղյուսակ է, որի յուրաքանչյուր ամսվան համապատասխանող սյունյակի վանդակները լրացվում են x սիմվոլով միայն այն դեպքում, եթե տվյալ տողում ներկայացված իրադարձությունը իրոք տեղի է ունեցել:

Օրինակ՝ x սիմվոլով կնշվի հոկտեմբեր ամսվան և «բարձր եկամուտներ» տողին համապատասխանող վանդակը, եթե իրոք այդ ամսվա ընթացքում համայնքի բնակիչը ունեցել է բարձր եկամուտ: Հակառակ դեպքում վանդակը կմնա դատարկ:

Սեզոնային օրացույցում ընդգրկված տողերը ենթակա են փոփոխության, այսինքն կարող են ավելացվել/պակասեցվել համայնքի բնակիչների կողմից, եթե նրանք գտնեն, որ «սոցիալ-տնտեսական», «առողջապահություն», «վտանգներ/աղետներ» բաժիններում ներկայացված տողերը սեզոնային լրիվ պատկերը չեն տալիս:

## **6. ՊԱՏՄԱԿԱՆ ՕՐԱՑՈՒՅՑ**

### **Նպատակը**

Բացահայտել տասնամյակ առ տասնամյակ համայնքի զարգացման վրա ազդեցություն ունեցած երևույթները և ակնառու փոփոխությունների միտումը:

### **Ակնկալվող արդյունքները**

Այս մեթոդը լայն հնարավորություն է տալիս ստանալ անցյալում տեղի ունեցած իրադարձությունների պատկերը և անել համապատասխան եզրահանգումներ, որոնք կարող են օգտակար լինել համայնքային մակարդակով ռիսկերի նվազեցման ծրագրերի պլանավորման գործընթացի ժամանակ:

### **Պատմական օրացույցի լրացման ձևը**

Օրացույցը լրացվում է համայնքի անդամների հետ միասին, ապահովելով համայնքի բնակչության բոլոր շերտերի համաչափ ներկայացուցչությունը, հաշվի առնելով գենդերային հավասարության սկզբունքը և համայնքի մեծահասակների, ինչպես նաև երիտասարդության մասնակցության անհրաժեշտությունը: Անցած տասնամյակների հետ կապված հստակ տեղեկատվության տրամադրման հարցում համայնքի մեծահասակները առանձնահատուկ դեր ունեն, քանի որ նրանց հաղորդած տեղեկություններն անփոխարինելի են:

Աղյուսակում նշված սյունյակները կարող են, անհրաժեշտության դեպքում, ավելացվել ըստ համայնքում տեղի ունեցած փոփոխությունների: Օրինակ՝ կրթական բնագավառը, ճանապարհաշինությունը, հողատարածքները և այլն, եթե դրանք եղել են անցյալում և ենթարկվել փոփոխությունների:

Օրացույցը լրացնելու համար յուրաքանչյուր ոլորտի համար կարելի է ընտրել որոշակի սիմվոլներ և լրացնել վանդակները:

## **7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ**

### **Նպատակը**

Բացահայտել և դասակարգել կառավարական և ոչ-կառավարական շահագրգիռ այն կառույցները, խմբերը, անհատներին, որոնք ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունենում են ունեցել կամ ունեն համայնքի սոցիալական կյանքի և զարգացման ոլորտների վրա:

Հիմնական շահագրգիռ կողմերը որոշվում են ըստ համայնքի կյանքում ունեցած իրենց կարևորության և ազդեցության աստիճանի:

### **Ակնկալվող արդյունքները**

ԽԿԳ գործընթացում կարևորվում է շահագրգիռ կողմերի մասին տվյալների հավաքագրումը, քանի որ ԱՌՆ միջոցառումների ու նախագծերի իրականացման ժամանակ կարող է առաջանալ նրանց մասնակցության, աջակցության կամ միջամտության անհրաժեշտությունը:

Հիմնական շահագրգիռ կողմերը գնահատվում են 1-ից 5 միավորով՝ ըստ համայնքի վրա ունեցած ազդեցության և համայնքի համար կարևորության: Գնահատականները լրացվում են աղյուսակում: Ազդեցությանն ու կարևորությանը տրված գնահատականները միջինացվում են և համեմատվում: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս համայնքին կողմնորոշվել հիմնական շահագրգիռ կողմերի ընտրության հարցում՝ ԱՌՆ միջոցառումներին հնարավոր մասնակցություն կամ աջակցություն ցուցաբերելու համար:

**ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ/ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ  
(ՏՐԻԱՆԳՈՒԼՅԱՑԻԱ)**

**Նպատակը**

Հավաքագրված տվյալները/տեղեկատվությունը վերլուծելու համար կիրառվում է տրիանգուլյացիայի մեթոդը, որը թույլ է տալիս «խաչաձև ստուգման», համադրության և սինթեզի միջոցով բարձրացնել տվյալների ճշգրտության աստիճանը: Տրիանգուլյացիայի մեթոդի կիրառման համար անհրաժեշտ է ունենալ առնվազն երեք, համարյա հավասարազոր, աղբյուրների տվյալներ:

**Ակնկալվող արդյունքները**

Արդյունքում ԽԿԳ խումբը հստակ պատկերացում կկազմի համայնքին սպառնացող վտանգների և ռիսկերի վերաբերյալ, հնարավորություն ստանալով եզրակացություններ ձևավորել վերջիններիս գերակայության, դրանց նվազեցման առկա կարողությունների և այդ կարողությունները համայնքի իմացության բարձրացմանն ու բարի կամքի դրսևորմանն ի նպաստ դնելու մասին: Ստացված տվյալների հիման վրա ԽԿԳ խումբը համայնքի քննարկմանն է ներկայացնում իր եզրակացություններն, ինչպես նաև հանդես է գալիս հիմնավորված առաջարկություններով կապված ԱՌՆ հետագա գործունեության պլանավորման և իրագործման հետ:

Համայնք մտնելու առաջին իսկ պահից ԱՌՆ թիմի անդամները (մարզային փրկարարական ծառայության և աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմի ներկայացուցիչներ) և համայնքի պատասխանատու անձինք միասնաբար անցկացրել են ակնադիտական զննում,որի ընթացքում գրանցվել են ԱՌՆ գործընթացի համար անհրաժեշտ առաջնային տպավորությունները համայնքի շինություններից,ճանապարհներից,աղբահանությունից և այլն:

**ԱԿՆԱԴԻՏԱԿԱՆ ԶՆՆՄԱՆ ԱՂՅՈՒՄԱԿ**

Առարկաներ, երևույթներ, մարդիկ, հարաբերություններ	Նկարագիր
<b>Ենթակառուցվածքներ</b>	
Շենք, շինություններ (վարչական, հասարակական, արտադրական՝ անկախ սեփականության ձևից)	Համայնքի բնակելի ֆոնդը հիմնականում կազմված է 5 և 9 հարկանի շենքերից և առանձնատներից:Բնակելի տները մեծամասամբ գտնվում են բարվոք վիճակում:Տնամերձ տարածքները զբաղեցնում են այգիներ և բանջարանոցներ;
Ճանապարհներ՝ հիմնական, ներքին	Ճանապարհները հիմնականում ասֆալտապատ են,գյուղական համայնքներում ընթացքի մեջ են վերանորոգման աշխատանքները ,լուսավորումը ճանապարհներին ապահովված է:
Կոյուղի	Համայնքը կոյուղացված է:Խմելու ջրի ,ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը պատկանում են<<ՎԻՈՒԱ ԶՈՒՐ>>ՓԲ ընկերությանը:
Աղբահանություն	Աղբահանությունը Ձերմուկ քաղաքում,Կեչուտ և Գնդևազ գյուղերում կատարվում կենտրոնացված ձևով<<ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ և ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>><ՈԱԿ-ի միջոցով,աղբը տեղափոխվում է <<Ջիրակ>> աղբավայր: <ՈԱԿ-ը իր գործառույթները իրականացնում է << օրենսդրությանը համապատասխան համայնքի ավագանու կողմից հաստատված կարգի և սխեմայի համաձայն՝ամեն օր: Իսկ Հերիեր և Կարմրաշեն գյուղերը իրեն աղբը տեղափոխում են Հերիեր համայնքում գտնվող աղբավայր:
<b>Կենսական կարևոր համակարգեր</b>	
Դպրոց, ուսումնական այլ հաստատություն	Համայնքում գտնվող դպրոցի շենքերը հարմարեցված 1 և 2 հարկանի շինություններ են:Վերանորոգված են և գտնվում են լավ վիճակում,սանհանգույցները և տանիքը գտնվում են լավ վիճակում,գրեթե ամեն տարի կատարվում են վերանորոգման աշխատանքներ:
Բուժարան, հիվանդանոց	Համայնքում գործող հիվանդանոցը 2 հարկանի շինություն է,որը ապահովված է առաջին բուժօգնության միջոցներով,գյուղական բնակավայրերում կան ևս բուժկետ որը ապահովվում

	է բնակրությանը որևէ խնդիր առաջանալու դեպքում:
Համայնքապետարան	Համայնքապետարանի շենքը 3 հարկանի է, վերանորոգված է, ապահովված ջեռուցման համակարգով, էապես խնդիրներ չկան:
Տրանսպորտ, էներգակիր, ջրային ռեզերվուար, հաղորդակցության և կապի համակարգ կամ միջոց, ոստիկանություն, հրշեջ խումբ, այլ	Կապը մարզկենտրոնի և հարևան համայնքների հետ իրականացնում է երթուղային միկրոավտոբուսի և անհատական մեքենաների միջոցով: Ջերմուկի և Երևանի միջև գոյություն ունի կանոնավոր միկրոավտոբուսային երթուղի՝ օրական մեկ անգամ: Համայնքը հարուստ է ջրային ռեսուրսներով, առկա են կապի և հաղորդակցության միջոցներ: Համայնքում գործում են Ոստիկանության, Հրշեջ ծառայության ստորաբաժանումներ:
<b>Որիսկային տարածքներ – հանգստի, ժամանցի, հանրային հավաքի վայրեր</b>	
Սրճարան, սննդի վայր, այլ	Համայնքում գործում են ռեստորաններ, սրճարաններ, և սննդի այլ վայրեր: Դրանք հասանելի են տարվա բոլոր ժամանակներին: Նշված աշխատանքներում անչափահասներ ներգրաված չեն:
Խաղահրապարակ, մարզադաշտ	Համայնքում կան խաղահրապարակներ, մարզադաշտ, սպորտ դպրոց, շախմատի տուն որոնք կարելի է երեխաների զբաղմունքն ապահովվելու համար, դրանք նաև հարմարեցված են հաշմանդամություն ունեցող երեխաների համար:
Եկեղեցի (այլ պատմամշակութային շինություններ, կամուրջներ)	Համայնքում կա եկեղեցի, որը կառուցվել է 2007թ.-ին Սուրբ Գայանե եկեղեցին, կան նաև մատուռներ, նաև Գնդևանքը որը ունի իր կարևոր ու նշանակալից պատմությունը:
<b>Վտանգ</b>	
Վառելիք, գազալցակայան	Համայնքում գործում են գազալցակայան ,բենզալցակայան, սակայն դրանք գտնվում են բնակելի տներից հեռու, և ապահով են մարդկանց կյանքի և առողջության համար:
Ջրափոսեր, չհոսող ջուր	Համայնքում չկան ջրափոսեր և չհոսող ջուր:
Ականապատված տարածքներ	Համայնքում չկան ականապատ տարածքներ:





ՊԱՏՄԱԿԱՆ ՕՐԱՑՈՒՅՑ

Ժամանակացույց	Բնակչություն	Տուն/Շինություն	Անասուն/Հող	Բիզնես	Ենթակառուցվածքներ	Կրթություն/Մշակույթ	Ծառեր/Անտառներ	Երեխաներ	Աղետ
1970			—	\$\$					
1980	↗	↗	↗	↗	↗	↗		↗	—
1990	↗	↗↘	↘	↗	↗	↗	—	↗	1988թ. երկրաշարժ
2000	↗	↗	↗↗	↗	↗↗↗	↗	—	↗	կարկտահար., երաշտ
2010-2017	↗	↗	↘↗	↘↗ 2010	↗↗↗↗	↗↗↗↗	↗↗	↘	ցրտահար., կարկտահար., ուժեղ քամի

Պատմական օրացույցի օգնությամբ վեր հանվեցին բոլոր այն առանձնահատուկ երևույթներն ու դեպքերը, որոնք իրենց ազդեցությունն են թողել համայնքի կյանքի և զարգացման վրա: Ջերմուկ համայնքի համար խորհրդային միության փլուզումը, երկրաշարժը, պատերազմը և տնտեսական ճգնաժամը իրենց բացասական հետևանքներն են թողել համայնքի ենթակառուցվածքների, շենք-շինությունների, գյուղատնտեսական տեխնիկայի, կենսական կարևոր համակարգերի վրա, սակայն վերջին տարիներին համայնքի և կառավարության ուժերով համայնքում կատարվում են կառուցապատման աշխատանքներ, մարդկանց բնականոն կյանքը բարելավվում է:

Ինչ վերաբերվում է համայնքին սպառնացող վտանգավոր երևույթներին, համայնքում մշտապես դիտվել են հետևյալ երևույթները՝ կարկտահարություն, առատ տեղումներ, ցրտահարություն, ամպրոպ և կայծակ: Համայնքին լուրջ խնդիր է առաջացնում ոսկու հանքի շահագործումը, որը դարձել է բնակչության շրջանում անհանգստության առիթ: Համայնքային խնդիրները լուծելու նպատակով տեղական և պետական իշխանությունները անում են ամեն ինչ համայնքի զարգացմանը խթանելու համար:

## ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՖՈԿՈՒՍ ԽՄԲԵՐՈՒՄ

Ֆոկուս խմբերը ձևավորվել են համայնքի ղեկավարի և հիմնական դերակատարների աջակցությամբ: Ֆոկուս խմբերում ներգրավվել են համայնքի առողջապահական և կրթական ոլորտի ներկայացուցիչներ:

### Առողջապահական ոլորտ

Համայնքիում գտնվող առողջության կենտրոնի շենքը գտնվում է բարվոք վիճակում, ունի ջրամատակարարման, ջրահեռացման համակարգ: Շինությունը 2 հարկանի է, ապահովված է սարքավորումներով, պարագաներով և դեղորայքով, միակ խնդիրը մասնագետների հարցն է, որի կարիզն ունի համայնքի բնակչությունը: Գյուղական բնակավայրերում բուժկետներ կան, բայց կարիզ կան սարքավորումների, պարագաների և դեղորայքի հետ կապված, Կարմրաշեն և Հերիեր տանող ճանապարհների վիճակը ծմռանը դժվարանցանելի են բուժօժանայության մեքենաների համար: Այս ամենը բարձրացնում է համայնքի գյուղական բնակավայրերի խոցելիությունը:

Առողջապահական անձնակազմը և համայնքի ՏԻՄ-ը պատրաստակամություն հայտնեցին աջակցելու ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների և ծրագրերի իրականացմանը:

### Կրթական ոլորտ

Համայնքի կրթական համակարգը ներառում է հիմնական և ավագ դպրոցներով: Դպրոցի տեղակայման վայրը հետազոտված է, գրեթե ամեն տարի դպրոցում կատարվում են վերանորոգման աշխատանքներ, հիմնականում դպրոցներում չկան բուժկետ, դպրոցները տաքացվում են գազի ջեռուցման համակարգերով: Դպրոցները ունեն ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր: Խնդիրներ կան նաև հաշմանդամություն ունեցող երեխաների համար նրանց շարժի հետ կապված և չկան հարմարանքներ ֆիզիկական մարզանքներ կատարելու համար: Ըստ դպրոցների տնօրինության դպրոցներն ունեն տարհանման պլաններ, որոնք փակցված են դպրոցի նախասրահում: Ռեսուրսների և աշակերտների պատասխանները տարհանման պլանի վերաբերյալ դրական էին պլանավորված, բոլորն էլ տեղյակ էին որ դպրոցում կան տարհանման պլաններ: Հիմնականում դպրոցներում փակցված են տարհանման ուղիները նշող ցուցանակներ: Տարին մի քանի անգամ դպրոցներում կազմակերպվում են տարհանման միջոցառումներ, որը ավելի է բարձրացնում գիտելիքներն ու իմացությունը արտակարգ դրության ժամանակ: Նաև փակցված էին հրդեհի, երկրաշարժի և այլ արտակարգ իրավիճակների ժամանակ գործելակերպի կանոնների վերաբերյալ հուշաթերթիկներ, ինչպես նաև անձնակազմի և աշակերտների հանձնարարականներն ու հրահանգները:



## ԿԻՍԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

Հաշվի առնելով, որ հարցազրույցները հիմնված են յուրահատուկ գիտելիքների և փորձի վրա, կիսակառուցվածքային հարցազրույցները իրականացվեցին համայնքապետի և ավագանու անդամների հետ: Դպրոցում իրականացված ուսումնասիրության ընթացքում կիսակառուցվածքային հարցազրույց անց է կացվել տնօրենների հետ:

Հարցազրույցի արդյունքում բացահայտվել են համայնքում առկա հետևյալ կարողությունները.

.տարհանման պլան

.աղետների արձագանքման պլան

.արագ արձագանքման խումբ:

## ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱԿԻՃԱԿՆԵՐԻՆ ԴԻՍԱԿԱՅԵԼՈՒ և ԱՐՋԱԳԱՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որպես ԱԻ-ին դիմակայելու կարողություններ նշվեցին նաև անտառներ, աղբյուրներ, գետը, համայնքապետարանը, դպրոցը, և այլն;

Դպրոցի տնօրենների հետ անցկացված հարցազրույցի ընթացքում բացահայտվել են դպրոցում առկա հետևյալ կարողությունները.

.տարհանման պլան

.հատուկ շջակներ

.կրակմարիչներ

.ստացիոնար և բջջային կապ:

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱԿԻՃԱԿՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ՀԵՏԱՆՔՆԵՐԸ;

Համայնքում տեղի են ունեցած բնական երևույթների հետևանքով համայնքը չի տուժել, միայն պետք է նշել այն որ ձմռանը լինում են առատ տեղումներ բայց դրա լուծումը կա և տեղական իշխանությունը անում է ամեն բան, որպեսզի երթևեկությունը լինի անցանելի և անվտանգ: Հարկ է նշել ,որ վերջին տարիների զգացվում է կլիմայի փոփոխություն՝ երաշտներ, կարկտահարության աճ, առատ տեղումներ, ցրտահարություն սակայն համայնքում կան հակակարկտային կայաններ, ոռոգման համակարգ որը ապահովվում է տվյալ աղետների նվազեցումը,

## ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Ջանգվածային հարցմանը մասնակցել են համայնքի բնակիչների 5 %-ը, որի արդյունքում հավաքագրվեցին տվյալներ.

.համայնքին սպառնացող վտանգների իմացության,

.համայնքի խոցելի տարրերի ու կարողությունների իմացության,

.ԱՌՆ ոլորտի հիմնական դերակատարների,

.արտակարգ իրավիճակներին դիմակայելու և արձագանքելու պատրաստվաշույթյան,

.իր ներուժը ԱՌՆ միջոցառումների պլանավորման և իրականացման գործում ներդնելու բնակչության պատրաստակամության,

.ԱՌՆ միջոցառումներին մասնակցության վերաբերյալ:

Դպրոցի ուսումնասիրությանը մասնակցել են 30 ուսուցիչներ և 30 աշակերտներ:

Ուսումնասիրության նպատակն էր պարզել արտակարգ իրավիճակներին դպրոցի անձնակազմի և աշակերտների պատրաստվածության աստիճանը, աղետներին արձագանքման դպրոցի կարողությունները և իրազեկվածությունը համայնքին և դպրոցին սպառնացող վտանգների վերաբերյալ:

Ջանգվածային հարցումներից ստացված տեղեկությունները դասակարգվել են, որի արդյունքները բերված են ստորև:

Հայաստանը գտնվում է բնական աղետների բարձր ռիսկային գոտում և ենթակա է տարբեր վտանգների ազդեցությանը: Բնական աղետների շարքում Հայաստանը բոլորից շատ ազդեցություն է կրում երկրաշարժերից, վաղ գարնանային ցրտահարություններից, կարկտահարությունից, ուժեղ քամիներից, երաշտներից և հրդեհներից: Հայաստանը գտնվում է աշխարհի առավել բարձր սեյսմիկ ակտիվության գոտիներից մեկում, ուստի այստեղ առկա են գեոֆիզիկական վտանգներին առնչվող նշանակալի ռիսկեր: Վերջին երեսուն տարվա ընթացքում տեղի ունեցած երկրաշարժերը վնաս են հասցրել մեծ թվով մարդկանց, ինչպես նաև հանգեցրել զգալի տնտեսական վնասների: Վերլուծությունները ցույց են տվել, որ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում եղանակային և կլիմայական վտանգավոր երևույթների ուժգնությունը և հաճախականությունը աճել է: Օդերևութաբանական դիտարկումների տվյալների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում վերջին 80 տարիների կտրվածքով դիտվել է տարեկան ջերմաստիճանի աճ 0.850 Շոկ և տեղումների նվազում 6-8%-ով: Ջերմաստիճանի և տեղումների փոփոխությունները ՀՀ տարածքի տարբեր շրջաններում և տարբեր սեզոններում ունեն տարբեր միտումներ: Բնածին վտանգավոր երևույթները և դրանց բացասական հետևանքները մեծ ազդեցություն ունեն մարդու բարեկեցության և տնտեսության զարգացման վրա: Բնական վտանգավոր երևույթները ըստ էության չեն առաջացնում աղետներ, քանի դեռ չեն զուգակցվում հասարակության խոցելիության հետ: Կլիմայական այս երևույթների ուղղակի հետևանքն է նաև եղանակային կտրուկ փոփոխությունների ավելացումը, որն, ըստ բազմաթիվ հետազոտությունների, ռիսկի գործոն է ամենատարբեր ոլորտների համար՝ առողջապահական, գյուղատնտեսական, էներգետիկ և այլն: Շատ հաճախ բնածին վտանգների և վտանգավոր երևույթների ազդեցությունը հանգեցնում է

մարդու բնակության միջավայրի որակական փոփոխությունների և շատ դեպքերում՝ աղետալի հետևանքների: Յուրաքանչյուր բնածին վտանգավոր երևույթ՝ կախված տեսակից, բնույթից, մասշտաբից, թողնում է ամենատարբեր հետևանքներ, որոնց շրջանակները պայմանավորված են խոցող գործոններով՝ խոցման դաշտերով, տեղական պայմաններով, խոցելի տարրերով, որոնցից էլ վերջին տասնամյակներում նկատվում են հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների աճի միտումներ: Ըստ պաշտոնական տվյալների, վերջին տասնամյակներում նկատվում են հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների աճի միտումներ: Վերջին 30 տարվա ընթացքում ՀՎԵ դեպքերի գումարային քանակը աճել է 1.2 դեպքով, իսկ վերջին 20 տարում տարեկան 1.8 դեպքով: Բնածին երևույթներից առավել շատ նշվեցին՝ կարկտահարությունը, ցրտահարությունը, առատ տեղումները, ուժեղ քամիները: Նշվեցին նաև այլ երևույթներ՝ քարաթափությունը, սողանքը, ինչպես նաև մարդկանց պատճառով ստեղծված աղետներից՝ հրդեհները և ոսկու հանքի շահագործումը, որը ըստ բնակչության վտանգավոր է մարդկանց կրճանքի և առողջության համար:

Շատ հաճախ բնածին վտանգների և վտանգավոր երևույթների ազդեցությունը հանգեցնում է մարդու բնակության միջավայրի որակական փոփոխությունների և շատ դեպքերում՝ աղետալի հետևանքների: Յուրաքանչյուր բնածին վտանգավոր երևույթ՝ կախված տեսակից, բնույթից, մասշտաբից, թողնում է ամենատարբեր հետևանքներ, որոնց շրջանակները պայմանավորված են խոցող գործոններով՝ խոցման դաշտերով, տեղական պայմաններով, խոցելի տարրերով, որոնցից էլ վերջին տասնամյակներում նկատվում են հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների աճի միտումներ: Ըստ պաշտոնական տվյալների, վերջին տասնամյակներում նկատվում են հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների աճի միտումներ: Վերջին 30 տարվա ընթացքում ՀՎԵ դեպքերի գումարային քանակը աճել է 1.2 դեպքով, իսկ վերջին 20 տարում տարեկան 1.8 դեպքով:

## **ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՐԵՎՈՒԹՅՆԵՐԻ ՍԵՁՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ**

Տարածաշրջանի կլիմայի կարևոր առանձնահատկությունը եղանակային պայմանների արտահայտված տատանումներն են ինչպես տարեցտարի, այնպես էլ տարվա ընթացքում: Սեզոնայնության ուսումնասիրությունը ի հայտ է բերում համայնքին սպառնացող վտանգավոր երևույթներին բնորոշ ժամանակահատվածները, ինչը հնարավորություն է տալիս անրադառնալով անցյալին, բացահայտել երևույթների հետ կատարվող փոփոխությունները և միտումները: Օդերևութաբանական դիտարկումների տվյալների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում վերջին 80 տարիների կտրվածքով դիտվել է տարեկան ջերմաստիճանի աճ 0,85 C-ով և տեղումների նվազում՝ 6-8 %-ով; Ջերմաստիճանի և տեղումների փոփոխությունները ՀՀ տարածքի տարբեր շրջաններում և տարբեր սեզոններում ունեն տարբեր միտումներ: Սեզոնայնության ուսումնասիրությունը անհրաժեշտ է, որպեսզի տարեկան պլանավորման ժամանակ կանխատեսվեն ու հաշվի առնվեն վտանգավոր երևույթների սեզոնային տատանումները, քանի որ երբեմն դրանց վերացնելը հնարավոր չէ:

## **ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՃԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Համաշխարհային վիճակագրությունը վկայում է, որ տարեցտարի աճում է հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների հաճախականությունը: Աշխարհում տարեկան մարդկային զոհերի 40% պայմանավորված է հենց հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթներով: Դրանք դառնում են նաև տնտեսական վնասների պատճառ: Մասնավորապես ՀՀ տարածքում 2000թ. երաշտից տնտեսությանը հասցված վնասը կազմել է 40 միլիոն դոլար, 2002թ. դեկտեմբերին դիտված աննախադեպ ցրտերի (-28, -32 աստիճան) պատճառով պտղագործությունը կրել է 25 միլիոն, իսկ 2004-ին՝ կարկտահարության, ցրտահարությունների, ուժեղ քամիների պատճառով՝ 28 մլն դոլարի վնաս: Վտանգավոր երևույթների հաճախականության ուսումնասիրությունից երևում է, որ Ահնիժոր համայնքում հաճախակի են դարձել հատկապես վտանգավոր օդերևութաբանական փուլի երևույթները: Բնակչության շրջանում վտանգավոր երևույթների հաճախականության վերաբերյալ ստացված տեղեկ ու լուրերի պատկերը երևում է ստորև բերված գրաֆիկից: Բնածին վտանգավոր երևույթների հաճախականության վերաբերյալ բնակչությունից ստացված տեղեկությունների գրաֆիկական պատկերը Վտանգավոր երևույթների հաճախականության ուսումնասիրության վերլուծությունը ցույց տվեց, որ համայնքի բնակչության տեսակետից համայնքը տարին առնվազն երկու անգամ ենթարկվում է սպառնացող բնածին երևույթների բացասական ազդեցությանը: Քննարկումների և հարցման ընթացքում պարզ դարձավ, որ բնակչության մեծ մասը ավելի շատ ուշադրություն է դարձնում և վտանգավոր է համարում այն բնածին երևույթները, որոնք դարձել են կամ կարող են դառնալ նյութական կորուստների բնականոն կյանքի ընթացքի խաթարման պատճառ: Այդ երևույթներից հատկապես առանձնացվեցին կարկտահարությունը, առատ տեղումները, ցրտահարությունը և ուժեղ քամիները: Վերջին տարիների եղանակային փոփոխությունները դարձել են ակնհայտ: Այդ փոփոխությունները ուղեկցվում են բնական երևույթներից աղետների հաճախականության ավելացմամբ: Եղանակային փոփոխությունները լրջորեն ազդում են բուսական և կենդանական աշխարհի վրա: Այն առավել ցայտուն է արտահայտվել գյուղատնտեսության մշակույթի վարման գործընթացների վրա: Այդ երևույթները մարդկային գործոնով պայմանավորված խոչընդոտները բացասական ազդեցություն են ունենում մշակաբույսերի բերքատվության, գյուղատնտեսական կենդանիների մթերատվության վրա:

## **ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿՐԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ**

Հարցման մասնակիցների 25%-ը անմիջական վնաս է կրել համայնքում տեղի ունեցած փոքրամասշտաբ աղետներից և արտակարգ իրավիճակներից: Վերջիններիս հետևանքով հիմնականում տուժել են գյուղատնտեսական ոլորտը: Հարցման ընթացքում պարզվել է նաև, որ համայնքային մակարդակում բացակայում է սպառնացող վտանգի մասին արագ ահազանգման համակարգը:

## ՎՏԱՆԳՆԵՐԻ և ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր վտանգի առումով առկա են կոնկրետ տարածքին բնորոշ խոցելիություններ, որոնք կախված երկրից, մարզերից, համայնքներից կամ անհատներից: Խոցելիության հետևանք է ֆիզիկական, տնտեսական, սոցիալական և քաղաքական ինստիտուցիոնալ թուլությունների: Համայնքի խոցելիության աստիճանը բարձրանում է նաև արտակարգ իրավիճակների վերաբերյալ գիտելիքների պակասի և վարքականոնների չիմացության հետևանքով: Ուսումնասիրվել է նաև տարբեր ծառայությունների հասանելիության աստիճանը, հարցվողների մեծ մասը ծառայության հասանելիությունը կապում էր համայնքի տեղադիրքի և ճանապարհների որակի հետ: Հարկ է նշել, որ հարցվողները ծառայությունների հասանելիության աստիճանը կապում էին նաև ֆինանսական խնդիրների և ենթակառուցվածքների վիճակի հետ:

## ԱՂԵՏՆԵՐԻՆ ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԿՈՒԹՅԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Համայնքի պաշտպանության համար կենսական կարևոր գործոն է աղետներին դիմակայելու և արձագանքելու տեղական կարողությունը, որն արտահայտվում է տեղում առկա արձագանքման գործիքներով և մեխանիզմներով, տեխնիկական միջոցներով և բնակչության պատրաստվածության մակարդակով:

Հարցազրույցների և հարցման ընթացքում պարզվեց, որ բնակչության և տեղական իշխանության շրջանում կա համայնքում առկա կարողությունների կիրառման և շահագործման վերաբերյալ գիտելիքների պակաս: Նմանատիպ իրավիճակներին դիմակայելու և արձագանքելու արդյունավետությունը կախված է բնակչության և տեղական իշխանության գիտելիքների և հմտությունների մակարդակից: Բնակչության շրջանում գիտելիքների ու հմտությունների պակասը էական ազդեցություն ունի համայնքի խոցելիության մակարդակի վրա: Աղետներին դիմակայելու և

արձագանքելու պատրաստվածության մակարդակը պարզելու նպատակով ուսումնասիրվեց համայնքի բնակչության ինքնագնահատականը աղետներին պատրաստվածության վերաբերյալ: Նախապատրաստումը սկսում է տեղեկատվությունից և այն տրամադրելու հնարավորություններից ու ձևերից: Հարկ է նշել, որ տեղեկատվության տրամադրման հիմնական միջոցներից՝ հանրային հեռուստատեսությունը, հանրային ռադիոն հասանելի է համայնքին:

Հարցվածների գերակշիռ մասը նշել է, որ միանգամից օգտվում է տեղեկատվության մի քանի աղբյուրներից: Տեղեկատվության հիմնական աղբյուրներն են՝ հանրային ռադիոն, հանրային հեռուստատեսությունը և ինտերնետը: Վերջին տարիներին արբանյակային հեռուստատեսությունը և ինտերնետը որպես տեղեկատվական աղբյուր ավելի հասանելի է դարձել համայնքի բնակչության համար: Տեղեկատվական աղբյուրներից դպրոցին հասանելի են հանրային հեռուստատեսությունը և ինտերնետը:

Ըստ դպրոցի աշխատակազմի և աշակերտների, դպրոցում կազմակերպվել են աղետներին և արտակարգ իրավիճակներին նախապատրաստվելու միջոցառումներ, արձագանքելու և դիմակայելու հատուկ դասընթացներ, սակայն նրանք ցանկացան վոր այդ միջոցառումները շարունակական և հաճախակի լինեն դպրոցներում: Ըստ հարցվողների՝ արտակարգ իրավիճակներում գործելակերպի և առաջին օգնության վերաբերյալ գիտելիքներին և հմտություններին ծանոթ են հարցվողների 40%-ը, մասամբ ծանոթ են՝ 35%-ը: Հարցվողների 25%-ը չունեն որևիցե գիտելիք արտակարգ իրավիճակներում գործելակերպի և առաջին օգնության վերաբերյալ, ինչը բարձրացնում է

համայնքի

խոցելիության

աստիճանը:

Արտակարգ իրավիճակների արձագանքման ոլորտում գործող շահագրգիռ կողմերի վերաբերյալ բնակչության իմացության ուսումնասիրությունը բացահայտեց, որ աղետների արձագանքման և հետևանքների վերացման գործում հարցման մասնակիցները հիմնականում տեսնում են համայնքի բնակչության, տեղական իշխանության, հարևան համայնքների, ուսուցում անցած կամավորների, փրկարար ծառայության, մարդասիրական կազմակերպությունների, սոցիալական համակարգի ՀՀ կառավարության մասնակցությունը: Փորձը ցույց է տալիս, որ արտակարգ իրավիճակներին դիմակայելու և արձագանքելու պատրաստվածության հանգամանքը պայմանավորված է բնակչության պատրաստակամությունից՝ կամավոր ներգրավվելու տարբեր ծրագրերում ուղղված աղետների նախապատրաստմանը, կանխարգելմանը և արձագանքմանը: Աղետներին նախապատրաստվելն ու կանխարգելումը ներառում են աղետից առաջ, աղետի ժամանակ և աղետից հետո մի շարք գործընթացներ: Այդպիսի ծրագրերը ներառում են գործողություններ, որոնցից կշահի ողջ համայնքը, այդ թվում՝ երեխաները: Բնակչության կողմից արտահայտված կամավորության պատրաստակամությունն առավելություն է, որը պետք է հաշվի առնվի և կիրառվի:

Դպրոցի անձնակազմի և աշակերտների շրջանում իրականացված ուսումնասիրությունը բացահայտեց, որ աղետներին արձագանքման և հետևանքների վերացման գործում հարցման մասնակիցները հիմնականում տեսնում են համայնքի բնակչության, տեղական իշխանության և ծրագրար ծառայության մասնակցությունը:

Բնակչության շրջանում հարցման մասնակիցների 35%-ը պատրաստակամություն հայտնեցին կամավոր մասնակցել աղետների հետ կապված նախապատրաստական, կանխարգելման և արձագանքման աշխատանքներին: Կարելի է եզրակացնել, որ համայնքի բնակչության հոգեբանական պատրաստվածությունը բավարար մակարդակի է, սակայն աղետներին արձագանքելու և դիմակայելու համար անհրաժեշտություն կա բարձրացնելու պատրաստվածության մակարդակը:

Հարկ է նշել, որ հարցման մասնակցած բոլոր աշակերտները և աշխատակազմի 80%-ը ցանկություն հայտնեցին մասնակցելու հատուկ դասընթացների և վարժանքների՝ արտակարգ իրավիճակներին դիմակայելու սեփական կարողությունները բարձրացնելու համար:

Իսկ դպրոցում տարահանման և ազդարարման պլանների, կապի և ազդարարման միջոցների առկայությունը, դպրոցի և անձնակազմի պարտականությունների ճիշտ բաշխումը և իմացությունը, գործնական պարապմունքների և ուսումնական տարահանումների անցկացումը նպաստում են երեխաների մոտ ծայրահեղ իրավիճակներին արագ արձագանքելու ունակությունների զարգացմանը և մտքի ու գործողությունների ավտոմատիզմի ձևավորմանը:

Ամփոփելով արդյունքները կարելի է եզրակացնել, որ համայնքի բնակչությունը գիտակցում է, որ ներգրավվելով նախապատրաստման և կանխարգելման գործողություններում, կարելի է նվազեցնել աղետի ազդեցությունը, որն ուղղակիորեն ազդում է համայնքի կայուն զարգացման գործընթացի վրա: Ակնհայտ է, որ յուրաքանչյուր համայնք ունի մարդկային և տեխնիկական ռեսուրսներ, ուստի որոշ խնդիրներ կարող են լուծվել սեփական ուժերով: Այդպիսի գործողություններից կշահի համայնքը: